ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 Երևան, Բաբայան 4
Հեռ.՝ (+37410) 286901

«26» 12 2009 թ.
№ ՀԱԱ-01/1628

ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Ա. Շահնազարյանին

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն կից ներկայացնում ենք մեկ անձից գնման ընթացակարգի արձանագրության պատճենը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

10334-09

Ֆին.տնտ. վարչության
հեռ. 281693

Հաստատում եմ

Աշխատակազմի ղեկավար
Արմեն Ասլանյան

(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)

(անձնագրային)

«26» դեկտեմբերի 2009թ.
Կ.Տ.

ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1. Պատվիրատուի

Անվանումը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
Հասցեն ք. Երևան, Լեոյի 54

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք ☐ աշխատանք X ծառայություն ☐

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում X վարձակալություն ☐ լիզինգ ☐

1.4. Գնման առարկայի համառոտ նկարագիրը «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի վառչական շենքի վերանորոգման աշխատանքներ

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի

Անվանումը (անունը, ազգանունը) «ԳՈՈՏԻԳ» ՍՊԸ
Հասցեն ՝ք.Երևան, Շիրակի 94 ա
1.6. Կնքված գնման պայմանագրի (կցվում է)

Ծածկագիրը N ԱԻՆ –ՍԱԵՁԲ-2
Կնքման ամսաթիվը 09.12.09թ.
Գործողության ժամկետը մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը.
Գինը 30 100 000 /Երեսուն միլիոն հարյուր հազար/ ՀՀ դրամ

1.7. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ 2009թ. պետական բյուջե

1.8. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը

Այո ☐ Ոչ X

Եթե այո, ապա նշել լիազոր մարմնին ուղարկված գրության

Ամսաթիվը _____ Համարը _____

2. Գնման գործընթացի նախապատրաստումը

2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի հաստատման օր
Օրը, ամսաթիվը 08.12.2009թ.

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

Պատասխանատու ստորաբաժանում X Տեխնիկական հսկողության հանձնաժողով ☐

Անվանումը Գնումների կազմակերպման և հաշվապահական հաշվառման բաժին
Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը Բաժնի պետ Կարեն Սոլոմոնյան

2.3. Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանն ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

☐ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ.
X արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև գնման առարկան ներառված չէ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.
☐ պատվիրատուն, որևէ անձից կատարելով գնում, որոշում է լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով որ դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ:

2.4. Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը

ՀՀ կառավարության 29.10.09թ. թիվ 1244-Ն որոշմամբ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների իրականացման համար հատկացվել է 30 100 000 դրամ: Վերոնշյալ աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը հաստատվել են 08.12.2009թ.: Հաշվի առնելով, որ վերանորոգման աշխատանքները անհրաժեշտ է ողջ ծավալով ձեռքբերել մինչև 28.12.09թ. ներառյալ, ծագել է գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է, ուստի գնման գործընթացը կազմակերպվել է մեկ անձից գնման ձևով:

Միաժամանակ հավաստում ենք, որ գնման ընթացակարգի արձանագրության ուշ ներկայացումը չի հանգեցրել գնման ընթացակարգի կամ դրա արդյունքների փոփոխմանը, ինչպես նաև գնման գործընթացի մասնակիցների շահերի ոտնահարմանը:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներակայացնելու միջոցը՝

Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում

3.2. Տեղեկություններ այն անձանց (անձի) մասին որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

N	Անվանումը (անունը, ազգանունը)	Հասցեն	Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը
1	2	3	4
	«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ	ք.Երևան Շիրակի 94 ա	«08» դեկտեմբերի 2009թ

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

N	Անվանումը (անունը, ազգանունը)	Հասցեն	Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը
1	2	3	4
	«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ	ք.Երևան Շիրակի 94 ա	«09» դեկտեմբերի 2009թ N 85

3.4. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.

Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո ☐ Ոչ X

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո ☐ Ոչ X

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել որակավորման իր տվյալները

Այո ☐ Ոչ X

3.5. Բանակցություններ
Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Այո ☐ Ոչ X

4. Կասեցում
Կասեցրե՞լ է պատվիարատուն գնման գործընթացը.

Այո ☐ Ոչ X

5. Բողոքարկում
Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Այո ☐ Ոչ X

Բողոքարկվե՞լ են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո ☐ Ոչ X

6. Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անունը, ազգանունը Կարեն Սուրմանյան

Պաշտոնը Գնումների կազմակերպման և հաշվապահական հաշվառման բաժնի պետ
Հեռախոսը /աշխ./ 281693

08.12. 2009թ.

«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ի
տնօրեն պրն. Ռ.Գալստյանին

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների բավարարման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի վարչական շենքի վերանորոգման աշխատանքները:

Առաջարկվում է Ձեզ կատարել վերոնշյալ աշխատանքները:

Գնումները ֆինանսավորվելու են 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնումների ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

Գնումներին մասնակցելու համար Պատվիրատուին պետք է ներկայացնի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ «ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ն՝

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.
2. դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.
3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում.
   - դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
   - գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
   - իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք ներկայացնել սույն գրության մեջ նշված հայտարարությունը և գնային առաջարկը:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք հիշյալ աշխատանքների գնման պայմանագրի նախագիծը:

Հարգանքով՝

ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավար Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

09.12. 2009թ.
N 85

Ի պատասխան Ձեր 08.12.2009թ. գրության, սույնով հավաստում ենք, որ «ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ն.

1. ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

2. դատական կարգով անվճարունակ չի ճանաչվել, լուծարման գործընթացում չի գտնվում, արգելանքի տակ չունի պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք.

3. կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում՝

- դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար,
- գնման պայմանագիր կնքելու նպատակով չի ներկայացրել կեղծ տվյալներ,
- իր գործողությամբ կամ անգործությամբ չի խախտել գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ն հայտնում է իր համաձայնությունը՝ Ձեր վերոհիշյալ գրության մեջ նշված «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի վարչական շենքի վերանորոգման աշխատանքները կատարել 30.100.000 /Երեսուն միլիոն հարյուր հազար / ՀՀ դրամով:

Հարգանքով՝

«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ի տնօրեն Ռ.Գալստյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԻՆ-ՄԱԾՁԲ-2

«09» _ 12 __2009թ.

ք. Երևան

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետև Պատվիրատու), ի դեմս ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա. Ասլանյանի, որը գործում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ-ն (այսուհետև Կապալառու), ի դեմս տնօրեն՝ Ռ. Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի համար կատարել ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, նախագծա-նախահաշվային փաստաթղթերին և սույն պայմանագրի թիվ 1 հավելվածով ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի պահանջներին համապատասխան կատարել ք. Երևան Լեռյի 54 հասցեում գտնվող՝ 1158.8 /մեկ հազար հարյուր հիսունութ ամբողջ ութ/ քառ.մետր ընդհանուր մակերեսով «Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի վարչական շենքի (որմնանցքը և որմնանցքից աջ գտնվող մասի) վերանորոգման աշխատանքներ՝ /այսուհետև՝ «Աշխատանքներ»/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքների արդյունքը և վճարել դրա համար:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Աշխատանքների կատարման ժամկետն է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 28.12.2009թ.ներառյալ:

1.3. Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների արդյունքի համար նախատեսվում է երաշխիքային ժամկետ, որը սահմանվում է աշխատանքները ողջ ծավալով ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի կողմից Աշխատանքների իրականացման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կապալառուի գործունեությանը.

2.1.2. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուի կողմից իրականացված Աշխատանքները չեն համապատասխանում սույն պայմանագրի **թիվ 1 հավելվածով** նախատեսված պահանջներին և /կամ/ խախտվել է Աշխատանքների իրականացման ժամկետը և Աշխատանքները չեն կարող իրականացվել Կապալառուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3. Չընդունել Աշխատանքները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին համապատասխան, սույն պայմանագրի 1.1. կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4. Մինչև Աշխատանքների իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Կապալառուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Կապալառուին:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Ուսումնասիրել և ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան իրականացված Աշխատանքները, իսկ իրականացման արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կապալառուին:

2.2.2. Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

2.2.3 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված երաշխիքային ժամկետի ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կապալառուին ներկայացնել իրատեսական ժամկետում թերությունների վերացման պահանջ:

2.3. Կապալառուն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան իրականացված Աշխատանքները:

2.3.2. Մինչև Կապալառուի կողմից աշխատանքների իրականացումը, հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 5 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.3.3. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 5.5. կետով նախատեսված տույժը:

2.4. Կապալառուն պարտավոր է՝

2.4.1.Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, նյութերով ու պատշաճ որակով:

2.4.2. Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքների իրականացումը ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ:

2.4.3. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.4. Սույն պայմանագրի 2.1.3. կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել պայմանագրի 5.2. կետով նախատեսված տուգանքը:

2.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.6. Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին՝ Պատվիրատուի կողմից սահմանված իրատեսական ժամկետում վերացնել թերությունները:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Կապալառուն Աշխատանքների կատարման ավարտից հետո հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում իրականացված Աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ :

3.2. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3.Աշխատանքները ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու/հաստատելու/ պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է 30 100 000 **/երեսուն միլիոն հարյուր հազար/ ՀՀ դրամ:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հարկերը, պարտադիր այլ վճարները:

4.2. Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքները ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա մինչև 30.12.2009թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կապալառուը պատասխանատվություն է կրում կատարված Աշխատանքների որակի և սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2. Սույն պայմանագրի 2.1.2. կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.3. կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքները չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,05 %-ի չափով:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքների արժեքի 0,05%-ի չափով:

5.4. Սույն պայմանագրի 5.2. և 5.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքների կատարման համար Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

5.5. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2. կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 %-ի չափով:

5.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8. Կապալառուի կողմից երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Պատվիրատուի սահմանած ժամկետում չվերացնելը հանգեցնում է Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանավորված Պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

5.9. Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կապալառուն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

7.5. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտատեր կողմի գրավոր համաձայնության:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
ք.Երևան, Լեոյի 54
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011400133
ՀՎՀՀ 02589789

Ա. Ասլանյան

«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան , Շիրակի 94 ա
Արդշինինվեստբանկ ՓԲԸ
Հ/հ 247010079223
ՀՎՀՀ 01802276

Ռ. Գալստյան

Հավելված N1
«09» «12» 2009թ. կնքված
N ԱԻՆ-ՄԱԾՁԲ-2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի վարչական շենքի (որմնանցքը և որմնանցքից աջ գտնվող մասի) վերանորոգման աշխատանքների

հ/հ	Աշխատանքի անվանումը	չ/մ	քանակը	միավորի արժեքը	գումարը /հազ.դրամ/
	Համաշինարարական աշխատանքներ				
1.	Միջնորմների քանդում	մ^2	100.8	685	69.048
2.	Միջնորմների շարում	մ^2	87.0	4212	366.444
3.	Դռների քանդում	մ^2	34.3	980	33.614
4.	Մանրահատակի քանդում	մ^2	170	458	77.860
5.	Պատուհանների քանդում	մ^2	28.4	1680	47.712
6.	Պատուհանագոգեր քանդում	մ^2	3.4	1680	5.712
7.	Պատերի և առաստաղի յուղաներկի մաքրում(քերում)	մ^2	106.4	480.9	51.168
8.	Առաստաղի լատեքսի մաքրում	մ^2	584.0	531	310.104
9.	Պատերի լատեքսի մաքրում	մ^2	1929.0	411.1	793.012
10.	Շին. աղբի բարձում և տեղափոխում	տ	25.0	3070	76.750
11.	Ջեռուցման սարքերի ապամոնտաժում	հատ	21	810	17.010
12.	Ջեռուցման և ջրամատակարարման խողովակների քանդում	մ	260.0	380	98.800
13.	Հատակի հարթեցման շերտ	մ^2	170.0	980	166.600
14.	Լամինատե հատակների կառուցում	մ^2	175.0	7220	1263.500
15.	Մետաղապլաստե դռների տեղադրում	մ^2	69.93	31930	2232.865
16.	Ջրամեկուսացում իզոգամով	մ^2	8.0	2770	22.160
17.	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում	մ^2	128	36720	4700.160
18.	Պատուհանագոգերի տեղադրում/պլաստմասե/ 40սմ	գ.մ	15.4	6160	94.864
19.	Պատերի երեսպատում կերամիկական սալիկներով	մ^2	126.0	7940	1000.440
20.	Հատակ պրես-գրանիտով	մ^2	15.0	9900	148.500
21.	Առաստաղի սվաղ գաջով	մ^2	16.0	4511	72.176
22.	Պատերի սվաղ գաջով	մ^2	155.0	2857	442.835
23	Շեպերի սվաղ գաջով	մ^2	126.0	4511	568.316
24.	Հախճապակյա տակ ց/ավազե սվաղ	մ^2	64.6	1553	100. 324
25.	Սանհանգույցների կախովի առաստաղ ԻՎԽ պրոֆիլներից	մ^2	17.0	6180	105.060
26.	Ներքին պատերի ջրաէմուլս. ներկով	մ^2	395.0	1222	482.690
27.	Առաստաղի ջրաէմուլս. ներկով	մ^2	270.0	810	218.700
	Ներքին էլ.մոնտաժ				
28.	Ակոսների փորում	գ.մ	300.0	283.40	85.020
29.	Պղնձե հաղորդալարի մոնտաժ սվաղի տակ	գ.մ	8606.0	320	2753.920
30.	Վարդակ	հատ	130	1200	156.000
31.	Անջատիչ	հատ	30	1440	43.200
32.	լուսատու	հատ	40	26000	1040.000
33.	մանրեռապան ճառագայթիչ	հատ	16	12850	205.600
	Տաք և սառը ջրամատակարարում				
34.	Ջրատաքացուցիչ կաթսայի տեղադրում 24կW	հատ	1	379240	379.240
35.	Ալյումինե ջեռուցիչ սարքերի մոնտաժ	հատ	38	5510	209.380
36	Ալյումինե մարտկոց H=500	հատ	557	5100	2840.700
37.	Խողովակ մետաղապլաստե 20մմ	գ.մ	200.0	2790	558.000
38.	Խողովակ մետաղապլաստե 32մմ	գ.մ	48.0	3380	162.240
	Կոյուղու ներքին ցանց				
39.	Կոյուղու պոլիէթիլենե խողովակ 100մմ	գ.մ	52.0	1960	101.920
40.	Հախճապակե լվացարանակոնք սիֆոնով	հատ	4	27230	108.920
	Կոյուղու պոլիէթիլենե խողովակ 150մմ	գ.մ	150	1130	169.500
41.	Հախճապակե լվացարանակոնք տակառիկով	հատ	4	29950	119.800

42.	Պոլիէթիլենային անկյունակ d=100	հատ	12	4120	49.440
43.	Պատյան խողովակ d=100 մմ^2	հատ	6	36030	216.160
44.	Պոլիէթիլենե ստուգիչ d=100	հատ	4	9380	37.530
45.	ԸՆԴԱՄԵՆԸ				22803.073
46.	Շահույթ 10%				2280.260
47.	ԸՆԴԱՄԵՆԸ				25083.334
48.	ԱԱՀ 20%				5016,667
49.	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ				30100.000

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
ք.Երևան, Լեոյի 54
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900011400133
ՀՎՀՀ 02589789

Ա. Ասլանյան

«ԳՈՌՏԻԳ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան , Շիրակի 94 ա
Արդշինինվեստբանկ ՓԲԸ
Հ/հ 247010079223
ՀՎՀՀ 01802276

Գ. Գասպարյան